[1] Դուրս գրման ամսաթիվ			Հարկային հաշիվ (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)		[2] Սերիա	[3] Համար
28	Հոկտեմբեր	2019 թ.			Ա	1423381603
[4] Մատակարարման ամսաթիվ						
25	Հոկտեմբեր	2019 թ.	Կարգը (անհրաժեշտության դեպքում վանդակում նշել «X»)	հատուկ	Ճշգրտվող հաշվի	
					Սերիա	Համար
					Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ	

Պայմանագիր	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար	[7]	
			[8]	
			[9]	

[10] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

Հաշիվ 2958 Փորձագետ Լ.Հովհաննիսյան

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

[11] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 1 5 5 6 3 5 4
[12] Անվանումը	«ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ)
[13] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 1 5 5 6 3 5 4 / 1
[14] Բանկային տվյալները	Երևանի թիվ 1 ՏԳԲ N 900018003724
[15] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ԹԱՂԱՄԱՍ Սարմենի 1
[16] Լրացուցիչ տվյալներ	

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

[17] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[18] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[19] Բանկային տվյալները	N
[20] Գտնվելու վայրը (հասցեն)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[21] Լրացուցիչ տվյալներ	
[22] Ռեմ միջոցով	Անուն, ազգանուն
	Լիազորագիր — Համար
	Լիազորագիր — Ամսաթիվ

[23] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափման միավորը	Ընդհանուր ծավալը (ծավալանակաշրջանը)	Միավորի գինը	Արժեքը	ԱԱՀ դրույքաչափը (%)	ԱԱՀ գումարը	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9
1	Քրեական գործ N24152819-ի անվտանգության փորձաքննություն	հատ	1	81666.67	81666.67	20	16333.33	98000
Ընդամենը					81666.67	X	16333.33	98000

Դուրս գրող՝ MURADYAN RUZAN 7810930060
անուն, ազգանուն

Ստացող

պաշտոն ստորագրություն (անուն, ազգանուն)

պաշտոն ստորագրություն (անուն, ազգանուն)

28/10/2019 09:34:44

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

դատատեխնիկական փորձաքննություն նշանակելու մասին

03.09.2019թ.

ք.Աշտարակ

ՀՀ քննչական կոմիտեի Արագածոտնի մարզային քննչական վարչության ավագ քննիչ Դ.Ոսկանյանս, վերանայելով թիվ 24152819 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Արագածոտնի մարզային քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 279-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով քննվում է թիվ 24152819 քրեական գործը՝ Սարգիս Գագիկի Ավագյանի, Արամ Աշոտի Հովհաննիսյանի և Տիգրան Աղվանի Ղազարյանի կողմից ,,Գնթունիք,, ՍՊԸ-ում ստացած մարմնական վնասվածքների դեպքի առթիվ:

Կատարված նախաքննությամբ տվյալներ են ձեռք բերվել, որ Սարգիս Ավագյանը, Արամ Հովհաննիսյանը և Տիգրան Ղազարյանը մարմնական վնասվածքները ստացել են ,,Գնթունիք,, սուպերմարկետում առկա վերելակից վայր ընկնելու հետևանքով:

Համաձայն ,,Գնթունիք,, ընկերությունից ստացված գրության՝ հիշյալ վերելակը գտնվում է արտադրամասի հետնամասում, շահագործվում է 2019 թվականի հուլիս ամսից, նախատեսված է ապրանքների և բեռների տեղափոխման համար, չի վնասվել, չի վերանորոգվել:

Նկատի ունենալով, որ նշված վերելակի տեխնիկական վիճակի և գործի համար նշանակություն ունեցող այլ հարցեր պարզելու համար անհրաժեշտ են դատատեխնիկական բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-244-րդ և 248-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 24152819 քրեական գործով նշանակել դատատեխնիկական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ,,Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն,, ՊՈԱԿ-ի փորձագետներին: Փորձաքննություն կատարելու համար փորձագետին տրամադրել սույն որոշումը, իսկ վերելակը գտնվում է Ապարան քաղաքի ,,Գնթունիք,, ՍՊԸ-ում:
2. Պարզաբանման համար փորձագետին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ Փորձաքննության ներկայացրած սարքավորումը վերելակ հանդիսանում է՝ թե ոչ, եթե այո, ապա նախատեսված է մարդկանց տեղափոխման համար՝ թե ոչ:

բ/ Եթե վերելակ է, ապա գործարանային արտադրության՝ թե ոչ, համարվում է արտադրական վտանգավոր օբյեկտ՝ թե ոչ:

գ/ Վերելակի ընկնելու փաստը հավաստող հետքեր կան՝ թե ոչ, եթե այո, ապա որ հատվածներում են տեղակայված, վերանորոգման ենթարկվել է՝ թե ոչ:

դ/ Ինչի հետևանքով է տեղի ունեցել դեպքը:

ե/Տեխնիկական անվտանգության կանոնների խախտումներ թույլ տրվել են՝ թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի և ում կողմից, կոնկրետ ինչ խախտումներ են թույլ տրվել:
զ/ Կա արդյոք պատճառահետևանքային կապ անվտանգության տեխնիկայի կանոնների խախտումների և Սարգիս Ավագյանի, Արամ Հովհաննիսյանի և Տիգրան Ղազարյանի հետ տեղի ունեցած դեպքի միջև՝ թե ոչ:

3. Եթե փորձաքննության ընթացքում կառաջանան հարցեր, որոնք թեև չեն առաջադրվել սույն որոշմամբ, սակայն կարող են առաջանալ փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետի իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար, ապա խնդրում եմ պատասխանել նաև այդ հարցերին:

Փորձագետին պարզաբանել ՀՀ քր. դատ. օր-ի 85-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքները և պարտականությունները: Միաժամանակ փորձագետին նախազգուշացնել ակնհայտ կեղծ եզրակացություն տալու, առանց քննիչի թույլտվության նախնական քննության տվյալները հրապարակելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ, 342-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին:

Փորձագետին նախազգուշացնել նաև փորձաքննություն կատարելու համար նրան տրամադրված նյութերի պահպանության նկատմամբ անփութություն ցուցաբերելու հետևանքով դրանց կորստի, ոչնչացման կամ հափշտակման դեպքում ՀՀ քր. օր-ի 315-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝ Դ.Ոսկանյան